ամենայն Հայոց. 'ի մեղապարտէ ողջ լեր զաւրացեալ 'ի կամն աստուծոյ՝ աւելեալ աւուրքք յամայր ամն ժամանակաց։

Պ — Խորին խորհրդով՝ առաջատես կամաւքն Աստուծոյ ընտրեալ 'ի պապաւ պերճանաց իշխանական զահոյից, Գատաւոր իրաւանց կամայն աստուծոյ, մեծատոհմ և ամենարիւրելի, ամենիմաստուն և խոհեմ իշխանաց Իշխան Պար. Կոստ(1)։

ԳՈՒՆԴՈՍՏԱԲԼԻ— Ծառայ Աստուծոյ և տիրող ծառայից նորին, ամենազով և ամենախնամ 'ի զաւրեղ Փրկչէն մերմէ Յիսուսէ անմահելի զաւրութեամբն արիացեալ՝ քաջամարտիկ զենուոր և արիազոյն Սպարապետ տանս Հայոց՝ բարեպաշտ և Քրիստոսասէր իշխանաց Իշխան Գունդստաբլ (յոգն.)։

Թ.Ե.գժուարիմաց եղեւ մեզ. իսկ զերրորդն, ՀԵԹ.գուցէ լիցի ՀԵԹՈՒՄ Ա. որ Թագաւորեցուցեալ ի տեղի իւր առ կենդանութեամբն զորդին իւր զԼեւոն յետ ազատութեանն ի գերութենէ եգիպտացւոց, յամի Տեառն 1269, եւ Հայոց, ՉԺԵ, եւ այնուհետեւ անշուշտ համարիւր նա ինքն ՀԵԹՈՒՄ Ա. իբրեւ Թագաւորահայր, Թէպէտ Մակար անուամբ եւս կրօնաւորէր ի վանս առանձնացեալ։

(1) Կոստանդին. զոր Թուի մեզ լինել Թագաւորահայրն, ՀԵԹՄոյ Ա. աւագ Պարոնն Կոստանդին իշխան, Տէր Բարձրբերդոյ, որ ի ժամանակի մահուան Լեւոնի Բ. արքայի, կարգեցաւ ի նմանէ ընդ Սիրադանայ կամ Ատան Պայլի, խնամակալ Թագուհւոյն Զապէլայ (դստեր վերոյիշեալոյն Լեւոնի Բ.). եւ յետ ինն ամսոց ի վախճանիլ յիշեալ սիրադանայ դաւանանութեամբ ոմանց, ընկալեալ վարէր զհոգաբարձութիւն Թագաւորութեանն ի 1219 Թ. եւ ի Հայոց ՈԿԸ։ Եւ ի մեռանիլ առաջին ամուսնոյ Թագուհւոյն Զապելայ, կրկին ամուսնացոյց զԹագուհին ընդ որդւոյ իւրում ՀԵԹՄոյ, որ նոյն ինքն է ՀԵԹՈՒՄ Ա. Թագաւոր յամի Տեառն 1224 եւ Հայոց ՈՀԴ։

ԿՐԿ— Կարող զաւրութեամբ (և) անվթար բազկաւ Յիսուսի բարձրացեալ և պանծացեալ առաջի Աստուծոյ և մարդկան, մեծապատիւ և ամենասիրելի բարեզարդև իմաստնախոհ և արիական Օշինուոր Պարոն.

ԿՐԿ— Հրամանաւ հզաւրին Աստուծոյ հաստատապէս ընկալեալ զԱստուածապարգև իշխանութեանդ պատիւ ընտրեալ. 'ի զարմից և գովեալ 'ի բնաւից Պարոն (յոգն.)

ԿԻՏ (ՏԻԿԻՆ)— Զրի և ամենաւատ աւրհնութեամբ արժանացեալ՝ և բարի շառաւեղաւք բողբոջեալ, սիրող սրբոց և ընտանի Աստուծոյ, համահաւասար սրբոց և երջանիկ ֆենդաբերացն, և Քրիստոսի սիրողաց բարեհամբաւեալ բարեպաշտութեամբ Տիկին . . . ։

ԿԻՏ (ՏԻԿԻՆ)— Ղ.Լորեալ 'ի հետաշաւղաց նախնեացն քոց բարեպաշտից՝ բարեսէր և Աստուածասէր բարի Տիկին և մեծահարկի Դշխոյ (յոգն.)։

ՃԳՆԱՒՈՐ ԿՈՒՍԻ— Ն՛շմարտութեան ճանապարհին անմոլար ընթացող՝ սիրող Քրիստոսի, և առեցող աշխարհի, անեալ սրբութեամբ և զարդարեալ անարատութեամբ սուրբ ճգնաւորն և խաչակրաւն աշխատաւոր բարեպաշտի և մեծահարկի Կուսի (յոգն.)

ԴԻՄԱՌՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԹՈՒՈՒՄՆ ՄԱՍԱՆՑ.

Զինչ այդ չքնաղ հրաշէկ պատկեր
Մուղայդ գողարիկ քաղցրաբան.
Զոր յիմն հրաշից ածես ի յուշ,
Եւ զդաշտ փաղփիւն Եղիւսեան։

Վառեան զաշխարհդ գիս ամպաչու
Տաՙր ի լերինդ ի կատար,
Որ մուզայից բոյլը կաճառաց
Կայՙեն զջնարս պար ի պար։
Բայց ասդէ ՙեկ, կամ զու ընդ իս
Զի զքեզ առնուլ ի սատար,
Տկար զրչիս ուղղեա ըզ գիծ,
Վասն զի եմ ապիկար։
Անձուկ սրտիս յղկեա զտախտակ,
Դիր նորանոր զաղափար.
Իբՙ ի բազմաց մի մի ծաղկանց
Հոտ բուրեցից զիւրաքար։
Զի արժանին քեզ յանդիման
Զարարս մատին աստ յիշեմ
Իմ Արարչին բնաւից էին.
Ա՛նց զու հեզիկ, ՙն առ ՙեմ։
Ա՛ռ ժամս մեղկեա ըզկնդնդոց
Ճոխ քնարիդ ըզ լարեր.
Զի յաւերժից իմ երգեսցէ
Տաւիղ հոգւոյս ընդ այեր։
Ոչ ի հարցումն ըզքեզ կոչեմ,
Եւ ոչ բանին անհանգիստ.
Զի ինձ կշռէ հանՙար վեհին
Զու ի բացեայ շրով նիստ։
Համբարձ քո զաչս յաստեղատունս,
Կորովարիր քաջ զիտեաՀ,
Յայն պարունակ, զոր Մուզայից
Ցարդ ջոկ խմբից չեւ զիտաց։
Մատն զգրիչ պահել մանկան
Զաչն ի քարտեղ ի ուսոյց.
Զմիտն յիմաստս խուռն արուեստից
Հասու լինել ի եցոյց։
Զՙոՙով լեզուն պարդ եւ յստակ
Զբարբառն ախորժ ի արար.
Զի համակ զործ ի յանգոյից,
Ա՛ռ յԱստուծոյ զինչ անկար։
Զոտն արագ ի բայլափոխ
Զձեռն շարժուն ի հաստեաց.
Զլանջ եւՙիկունս ամուր պարիսպ
Զՙել երակայն ի պարդեաց։
Զշունչն անհատ սիրտն հաստատ
Զերեսն կայտառ ի պահեաց.
Զյոդուած եւ ջիղ ամրափակեալ
Մաշկանափորտ ի կազմեաց։
Զայն եւ հագագն լեզունՙարգման
Անյայտ սրտին ի արար.
Ես Աստուծոյս իմոյ ծանեմ,
Եւ ի կամացն զինչ անկար։
Ունկն արագ ազդող կրից
Ընդդէմ զործոց ի հիմնեաց.
Կամք հաստատուն անվիշտ ի ցաւս
Միշտ յանդորրու ով վարժեաց։
Զաչն սրատես անքուն հսկող
Դիտող յայս յայն ի հաստեաց.
Ցերկինս ի վեր յերկիրս ի վայր,
Վեհին զգործս ի կշռեաց։
Օ՞ն հայեաց վեր յերկնից խորան
Դահ յԱնմահին հրավառ.
Ի խոր մղեա ըզ միտդ, ասա,
Ա՛ռ ի նմանէ զինչ անկար։
Զհեր զլխոյն զարդ զեղանի
Հուպ խիտ առ խիտ ի անկեաց.
Այնպէս պայծառ երկար ի քարշ
Ի գոյն սաՙից ի ներկեաց։
Հօնից ակօս կարագնագիծ
Կշռորդ ականց ի գծեաց.
Շառագունիլ այտից յանկարծ
Ի ներկ արեան ի ազդեաց։
Արտեւանունք մաշկաՙաղանդ
Փակել զաչկունս ի ասաց.
Թէ բարեմոյն եւ բան զնա
Բՙբաց ծածկոյՙ ի կարաց։
Ա՛ռնուլ ըզհոտ անոյշ ի յունչն
Զբզուանք ի գարշն ի ծանոյց.
Դաշնակ սիրոյ ոդջ անդամոց
Հաշտ առ միմեանս ի կացոյց։
Է՞ հոդ անբան, բուռն հար զմտացդ
Ե՛լ յանմահիցն ի կամար.
Զննեա անհուն զգործն, ասա,
Ա՛ռ ի հաստչէն զինչ անկար։
Որ յանէից արար ըզծագս
Տիեզերաց ըստ կարի.
Նա անսխալ զամենեսին
Քաջ զետեղեալ ի կարգի։
Որ էնն ի զահ բազմի յահեղ
Երկնից երկրի ահարկու.
Վառիմ ի սէրն նորուն կամաց
Բազկատարած ի սպասու։
Նմա երգեմ զփառս յաւէրժ,
Զնա օրհնեմ յաւիտեան.
Որոյ շնորհօք եւ ընդՙեւօք
Կացեալ մնացից անսասան։

ԵՂԻԱԶԱՐ ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍ։